ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-16Բ

ք. Երևան <<31>> 01. 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն.Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Գորիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտոր՝ Ա. Ղուկասյանի, ով գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.4.1.02.բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում <<Գորիսի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան 72 ուսանողի, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսուցում, որի դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողական նպաստների ձևով իրականացնել ուսման վարձի փոխհատուցում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 46 638 900 (քառասունվեց միլիոն վեց հարյուր երեսունութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 37 765 100 (երեսունյոթ միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 5 323 300 (հինգ միլիոն երեք հարյուր քսաներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ և սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 3 550 500 (երեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Գորիսի պետական համալսարան>>
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ք. Գորիս, Ավանգարդ 4
Հ/Հ 900011034130	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախարարության գլխավոր	Հ/Հ 900288000012
քարտուղար՝ _____ Ն.Հարությունյան	Ռեկտոր՝ _____ Ա. Ղուկասյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ